

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ և ՓՈՍՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՄԵԼԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Մելինե Դանիելյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի գլխավոր մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Պորտուգալական Հանրապետություն, ք. Լիսաբոն, 2024թ. ապրիլի 22-ից 25-ը:

4. Հրավիրող կողմը.

Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմին («ANACOM»):

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Պորտուգալիայի հեռահաղորդակցության ազգային կարգավորող մարմնի («ANACOM») կողմից մշակված գեոպորտալի մասին «TAIEX» աշխատանքային սեմինարին:

6. Քննարկված թեմաները.

Աշխատանքային սեմինարը կազմակերպվել էր Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի (ANACOM) և էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների ցանցի (EaPeReg) անկախ կարգավորողների և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) կողմից, որին մասնակցում էին ինչպես Եվրոպական Միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների ցանցի (EaPeReg) անկախ

կարգավորողների պատվիրակություններ, այնպես էլ համապատասխան նախարարությունների ներկայացուցիչներ:

Սեմինարի նպատակն էր անդրադառնալ գերարագ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ներդրման ծախսերը նվազեցնելու միջոցառումների մասին Եվրոպական Խորհրդի 2014 թվականի մայիսի 15-ի թիվ 2014/61/ԵՀ կանոնակարգի իրականացման գործնական հարցերին, ինչպես նաև ուսումնասիրել Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի («ANACOM») փորձը: Սեմինարի բանախոսները հանդիսանում էին Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի («ANACOM») ներկայացուցիչներ:

Սեմինարի 1-ին օրը՝ ապրիլի 23-ին, բանախոսները շնորհանդեսի միջոցով մասնակիցներին ներկայացրեցին Պորտուգալիայի հեռահաղորդակցության ազգային կարգավորող մարմնի («ANACOM») կարգավորման ոլորտները (հեռահաղորդակցություն, փոստ, տիեզերք) և իրականացվող աշխատանքները:

Ներկայացվեց «ANACOM»-ի կողմից ստեղծված աշխարհատարածական հարթակը՝ «Geospatial Platform»-ը, ինչը հանդիսանում է աշխարհատարածական հարթակ, որը օգտատերերին հասանելիություն է տրամադրում էլեկտրոնային հաղորդակցության և փոստային ծառայությունների աշխարհատարածական տվյալների վերաբերյալ: Հարթակը տրամադրում է ոլորտին վերաբերող աշխարհատարածական տվյալների լայն շերտեր և ակնկալվում է, որ շերտերի թիվը կաճի աստիճանաբար:

Հարթակի կարևորագույն հատկանիշներից է ցանցի ծածկույթի քարտեզագրման գործառույթը: Այդ գործառույթն իրականացվում է Պորտուգալիայի ամբողջ տարածքում՝ կոնկրետ վայրերում և հասցեներում ֆիքսված, շարժական և արբանյակային ցանցերի հասանելիության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Քարտեզի ցանկալի կետի վրա սեղմելով հնարավոր է լինում մանրամասն տեղեկատվություն ստանալ տվյալ վայրերում կամ հասցեներում հասանելի էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի, օպերատորների, տեխնոլոգիաների (2G, 3G, 4G, 4G+) և ինտերնետի արագության մասին: Հետևաբար, նշված գործառույթը հնարավորություն է տալիս օգտատերերին պարզել, թե տվյալ վայրերում, որտեղ նրանք բնակություն են հաստատել, որ օպերատորներն ունեն ցանցեր և ինչ ծառայություններ են մատուցում:

Հարթակը հնարավորություն է տալիս նաև տեսնել օպտիկամանրաթելային կամ 4G ծածկույթով հասանելիություն չունեցող տարածքները («Blank areas»):

Հարթակում առկա տեղեկատվությունը բխում է էլեկտրոնային հաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված տեղեկատվությունից՝ 40/2022 հրամանագրով և 77/2023 վարչական կանոնով սահմանված տեխնիկական բնութագրերի համաձայն: Այդ տվյալները պարբերաբար և դինամիկ թարմացվում են եռամսյակային կտրվածքով:

Ինչ վերաբերում է փոստային հատվածին, ապա «ANACOM»-ի հանրային կայքը հնարավորություն է տալիս տեղորոշել «Ունիվերսալ ծառայությունների» հետ կապված փոստային հաստատությունները:

Բանախոսները ներկայացրեցին նաև այն իրավական և տեխնիկական նախապայմանները, որոնք անհրաժեշտ են աշխարհատարածական հարթակ ստեղծելու համար:

Սեմինարի ընթացքում ներկայացվեց նաև «SIIA» համակարգը: «ANACOM»-ը «GEO.ANACOM» հանրային կայքից բացի, ներառում է նաև «SIIA» համակարգը (Sistema de Informação de Infraestruturas Aptas - Համապատասխան ենթակառուցվածքի տեղեկատվական համակարգ), որը հասանելի է միայն հավատարմագրված սուբյեկտներին:

Համապատասխան ենթակառուցվածքի տեղեկատվական համակարգը («SIIA») էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի անցկացման համար համապատասխան ենթակառուցվածքների մասին տեղեկատվության հասանելիության հարթակ է, որը ցանցերի պլանավորման մակարդակում ներառում է հետևյալ տարրերը.

- էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի անցկացման համար համապատասխան ենթակառուցվածքների վերաբերյալ ամբողջական և աշխարհագրական տեղեկատվության գրանցում.

- Ընթացակարգեր և պայմաններ, որոնք կիրառվում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի համար համապատասխան ենթակառուցվածքների մուտքի և օգտագործման համար.

- Նոր խողովակների և այլ ենթակառուցվածքների կառուցման մասին հայտարարություններ, որոնք կարող են օգտագործվել էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի անցկացման համար.

«SIIA»-ի կառավարման, պահպանման և հասանելիության երաշխավորման համար պատասխանատու մարմինը «ANACOM»-ն է:

«SIIA»-ում առկա տեղեկատվությունը հավաքվում է տարբեր գերատեսչություններից, որին հասանելիություն ունեն պետական մարմինները, ինքնավար մարզերը, տեղական

ինքնակառավարման մարմինները, պետության կողմից վերահսկվող սուբյեկտները, հանրային ընկերությունները, էլեկտրոնային հաղորդակցության ընկերությունները և ոլորտային կարգավորող մարմինները և այդ տեղեկատվությունը մշտապես թարմացվում է:

Սեմինարի ընթացքում բանախոսների կողմից ներկայացվեց նաև «Սպիտակ տարածքների» («White Area») քարտեզագրման համար «ANACOM»-ի կողմից կատարված աշխատանքները: «Սպիտակ տարածքները» դրանք՝ մինչև 100Մբիթ/վրկ արագությամբ ինտերնետ հասանելիություն չունեցող տարածքներն են, որը Պորտուգալիայի կառավարությունը հանձնարարել էր «ANACOM»-ին 1.5 տարվա ընթացքում քարտեզագրել, ինչը վերջինիս կողմից հաջողությամբ կյանքի էր կոչվել:

Բանախոսների կողմից ներկայացվեց Պորտուգալիայի փորձը՝ լայնաշերտ ինտերնետի զարգացման համար ենթակառուցվածքների և խողովակների քարտեզագրման մասին:

Սեմինարի 2-րդ օրը՝ 2024թ. ապրիլի 24-ը նվիրված էր լայնաշերտ ինտերնետի զարգացմանը ուղղված իրավական ակտերի ներկայացմանը:

Մասնավորապես, ներկայացվեց լայնաշերտ ինտերնետի ծախսերի նվազեցման Պորտուգալիայի կարգավորման փորձը: Բացի այդ, փորձագետների կողմից ներկայացվեց նաև «Գիգաբիթ ենթակառուցվածքի մասին» օրենքը («Gigabit Infrastructure Act»), որի նպատակն է լուծել լայնաշերտ ինտերնետի ծախսերի նվազեցման կանոնակարգի («Broadband Cost Reduction Directive») թերությունները և նպաստել գերբարձր թողունակությամբ ցանցերի («Very High-Capacity Networks») ծախսարդյունավետ և ժամանակին ներդրմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սեմինարի ընթացքում փորձագետների և մասնակիցների միջև կայացել են աշխատանքային քննարկումներ, որի ժամանակ մասնակից երկրների կարգավորող մարմինների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են իրենց երկրներում լայնաշերտ ինտերնետի քարտեզագրման առկա իրավիճակները, և վերջինիս ուղղությամբ ընթացող աշխատանքների մասին տեղեկատվությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին լայնաշերտի զարգացմանը ուղղված Պորտուգալիայի փորձը, և հաշվի առնելով, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանդիսանում է էլեկտրոնային հաղորդակցության

ոլորտի իրավասու մարմին և իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում լայնաշերտ ինտերնետի զարգացման և ընդլայնման քաղաքականության մշակում, ուստի քաղաքականության մշակման գործընթացում շատ կարևոր է ուսումնասիրել և հնարավորության դեպքում նաև Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնել միջազգային լավագույն փորձերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արամ Դանիելյան

29.04.2024թ.